## ՅԻՍՈՒՆ ՏԱՐԻ ԱՌԱՋ

### ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎ

Նիստ Բ. (Բշ., 15 Յունիս 1931)

Օրակարգ. — *Պատրիարքական ընտրելեաց հնգանուն ցանկի կազմութիւն։*

*Քուէարկութիւնը տուաւ հետեւեալ արդիւնքը. —*

*Տ. Թորգոմ Արք. Գուշակեան՝* 38 *քուէ*
*Տ. Մկրտիչ Եպս. Աղաւնունի՝* 19 »
*Տ. Յարութիւն Վրդ. Գորոնեան՝* 16 »
*Տ. Սմբատ Եպս. Գալազեան՝* 13 »
*Տ. Ներսէս Վրդ. Թորոսեան՝* 11 »

*Նիստը փակուեցաւ յաջորդ օր վերստին գումարուելու համար։*

Նիստ Գ. (Գշ., 16 Յունիս 1931)

Օրակարգ. — *Ընտրութիւն Պատրիարքի Առաք. Ս. Աթոռոյն Երուսաղէմի, ընտրելեաց հնգանուն ցանկին վրայէն։*

Ընթացք. — *Ատեանը բացուեցաւ Նախագահ Սրբազանի (Պատր. Տեղապահ Տ. Մեսրոպ Եպս. Նշանեան) աղօթքով։*

*Ձեռնարկուեցաւ քուէարկութեան և Ս. Աթոռոյս Պատրիարք ընտրուեցաւ Գերշ. Տ. Թորգոմ Արքեպս. Գուշակեան, Եգիպտոսեայց Առաջնորդը, 34 քուէով։*

*(Քուէներուն 5ը ճերմակ էին, և 2ը Տեղապահ Սրբազանին տրուած էին, հակառակ Նորին Սրբազնութեան կանխաւ հրաժարած ըլլալուն)։*

Սիոնի *երգը երգուելէն և աղօթք և մաղթանքներ ըլլալէն ետքը ատեանը փակուեցաւ։*

### ՀԻՃԱԶԻ ԹԱԳԱՒՈՐ ՄԷԼԻՔ ՀԻՒՍԷՅԻՆԻ ՅՈՒՂԱՐԿԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

*Եշ., 4 Յունիսի առաւօտեան ժամը 4ին Ամմանի մէջ վախճանեցաւ* Հիճազի Նախկին Թագաւոր Մէլիք Հիւսէյին։ *Հանգուցեալին մարմինը մեծ հանդիսութեամբ փոխադրուեցաւ Երուսաղէմ, ուր հասաւ նոյն օրը յետ միջօրէի ժամը 2.30ին։ Հերովդէսի Դրան առջև դագաղը ինքնաշարժէն հանուելով՝ ուսամբարձ տարուեցաւ Օմարի մզկիթը, Դամասկոսի Դրան ճամբով։ Դագաղին կը հետևէին հանգուցելոյն որդիները՝ Ն. Վ. Էմիր Աբտուլլահ, Էմիր Շաքիր և Էմիր Զայիտ, քաղաքային և զինուորական բարձրաստիճան պաշտօնատարներ, հոգևոր պետեր, Հիւպատոսներ և խուռներամ յուղարկաւորներ։ Պատրիարքարանէս կազմէ ներկայ գտնուեցաւ Գերշ. Տ. Մկրտիչ Եպս. Աղաւնունի՝ հետն ունենալով Տնօրէն ժողովոյ անդամ Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. Ճանսըզեանը և Աւագ-Թարգման Հոգշ. Տ. Պարգև Վրդ. Վրթանէսեանը։*

**(«Սիոն», 1931, Ե. Տարի, Յուլիս, (Թիւ 7, էջ 223-224)։**

* * *

*Ամեն. Տ. Թորգոմ Ս. Արքեպս. Գուշակեանի Ս. Աթոռոյս Պատրիարք ընտրուած ըլլալը հաղորդուած էր Պաղեստինի կառավարութեան, Ն. Վեհ. Թագաւոր-կայսեր (Ճորճ Ե.) հաստատութիւնը ստանալու համար։*

*Յիշեալ հաղորդագրին ստացման առթիւ, Երուսաղէմի Փոխ-Կառավարիչ Մր. Սալմանէ ստացուած է 23 Յուլիս 1931 թուակիր պաշտօնագիր մը։*

### ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

*Երջանկայիշատակ Դուրեան Պատրիարքի Յոբելեանին առթիւ եղած նուիրատուութեամբ կառուցուած* Կիւլպէնկեան Մատենադարանին *շինութիւնը բոլորովին աւարտած է, և Երանաշնորհ Պատրիարքին գիրքերը ամբողջութեամբ փոխադրուած են հոն, իսկ վանքի գիրքերն ալ հետըզհետէ պիտի փոխադրուին գեղեցիկ և արդիական այս շէնքին մէջ, որ ուսումնասիրութեան և մտաւորական աշխատանքի մեծ դիւրութիւն պիտի ընծայէ Միաբանութեան և Ընծայարանի աշակերտութեան։*

*Պաշտօնական բացումը տեղի պիտի ունենայ Ս. Աթոռոյ նորընտիր Պատրիարքին գահակալութենէն ետքը։*

**(«Սիոն», 1931, Ե. Տարի, Օգոստոս, Թիւ 8, էջ 254 և 256)։**

digitised by A.R.A.R.@